«ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ

Հայտնի է, որ փոքրամասնությունների և էթնիկ ինքնության խնդրի նկատմամբ Թուրքիայում կա զգայուն մոտեցում, և սա ինչ-որ առումով նաև բնական է մի երկրի համար, որը նման խառնիճաղանջ էթնիկ նկարագրով բնակչություն ունի: Ինքնության մասին քննարկումները Թուրքիայում բավական լայն տարածում են գտնում, որոնց հանդեպ փորձում են վերաբերմունք դրսևորել և այդպիսով նաև յուրահատուկ լուծումներ առաջադրել պետական տարբեր պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները: Հատկապես կցանկանայինք առանձնացնել որոշ ժամանակ առաջ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից հրապարակ նետված այն թեզը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիները կարող են ունենալ երկու ինքնություն՝ վերին և ներքին: Վերին ինքնությունը խորհրդանշում է քաղաքացիությունը, ներքինը՝ էթնիկ ծագումը: Հարկ է նշել, որ այս մասին Էրդողանը հրապարակավ արտահայտվել է քանիցս. մեջբերենք, օրինակ, 2005թ. նոյեմբերին Շըրնաքում արած նրա հետևյալ հայտարարությունը. «Իշխանությունները երեք կարմիր գիծ ունեն՝ էթնիկ, տեղային և կրոնական ազգայնականություն: Առաջինը էթնիկ ծագման հենքով ազգայնականությունն է, և սա մենք վերացնելու ենք: Թուրք, քուրդ, չերքեզ, լազ, բոլորս Թուրքիայի Հանրապետության քաղաքացու վերին ինքնության հովանու տակ մեկ և միասնական ենք լինելու: Ներքին ինքնությունների նկատմամբ հարգանք ենք տածելու, սակայն բոլորիս վերին ինքնությունը Թուրքիայի Հանրապետության քաղաքացիությունն է»: Էրդողանը վերին ինքնության միտքը զարգացնելով՝ ասել է, որ Թուրքիայում կան մոտ 30 էթնիկ խմբեր, որոնց վերին ինքնությունը Թուրքիայի քաղաքացիությունն է: «Սխալ է, օրինակ, մեր քուրդ քաղաքացիներին ասել՝ «դու քուրդ չես, թուրք ես», նույնը վերաբերում է նաև լազին, վրացուն, չերքեզին, աբխազին, ալբանացուն, բոսնիացուն և այլն»,- հայտարարել է Էրդողանը: Հատկապես հետաքրքիր է 2005թ. նոյեմբերի 20-ին Շեմդինլիում Էրդողանի արտահայտած հետևյալ միտքը. «Թուրքը պետք է կարողանա ասել՝ ես թուրք եմ, քուրդը՝ քուրդ եմ, լազը՝ լազ եմ, չերքեզը՝ չերքեզ եմ, մեր բոլորիս վերին ինքնությունը Թուրքիայի Հանրապետության քաղաքացիությունն է»:

Ի դեպ, «վերին ինքնության» մասին Էրդողանի միտքը նմանություն ունի նաև Օսմանյան կայսրության պանօսմանիզմի գաղափարի հետ, համաձայն որի՝ կայսրության բոլոր քաղաքացիները համարվում էին օսմանցի:

Էթնիկ ինքնության հարցի հետ ուղղակիորեն առնչվում է նաև տասնամյակներով թուրքական քաղաքական դիսկուրսում առկա հետևյալ հարցը. Թուրքիան իր բազմէթնիկ բնակչությամբ ինչպիսի՞ պետություն է՝ մոզաի՞կ, թե՞ մարմարե: «Մոզաիկ պետությունն» առաջին հերթին ենթադրում է երկրում ապրող տարբեր էթնիկ խմբերի գոյության ընդունում և սրանից բխող որոշ այլ հարցեր ևս (օրինակ՝ ազգային մշակույթի, լեզվի հանդեպ հարգանք և այլն): «Մարմարե պետությունը» ենթադրում է միատարր՝ թուրքական պետություն ամեն առումով, և սա էլ, իր հերթին, գրեթե մերժում է այլ էթնիկ խմբերի գոյությունն ու Թուրքիայում բնակվող բոլոր ազգերին համարում է թուրք: Էրդողանի հայտարարությունը տպավորություն է ստեղծում, թե նա պաշտպանում է «մոզաիկ պետության» տարբերակը, ինչի մասին նույնիսկ հայտարարություն է արել: Քննարկումների ընթացքում արտահայտվեցին անգամ իրավաբաններ: Նրանցից, օրինակ, Թուրքիայի Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողովի նախագահ Բուրհան Քուզուն հետևյալ կարծիքն արտահայտեց. «Թուրքիան նման է մարմարի, սակայն մարմարը տարբեր երանգներ ունի, որոնցից մեկն է գերակա. Թուրքիայում հենց թուրքական երանգն է գերակշռում»:

Վերին և ներքին ինքնության խնդիրը մեծ ծավալներ ընդգրկեց Թուրքիայում, իսկ վարչապետի արտահայտությունները պատճառ դարձան լուրջ քննարկումների, որոնք էլ, իրենց հերթին, ցույց տվեցին խնդրի կարևորությունը և արդիականությունը: Խնդրի վերաբերյալ

արտահայտվեցին քաղաքական, կրոնական, հասարակական գործիչներ, մտավորականներ։ Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») նախագահ Դևլեթ Բահչելին, դեմ արտահայտվելով մոզաիկայի տարբերակին, նշել է, որ եթե Թուրքիան մոզաիկա է, ապա այդ երկրի անունը պետք է լինի «Մոզաիկիստան», «սակայն քանի որ Թուրքիա ենք ասում, ապա այս անունը թուրք ազգից է ծագում»,- նշել է նա։ Բողազիչի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Զաֆեր Ուսքյուլը, ճշմարիտ համարելով, որ գոյություն ունի ներքին ինքնություն, սահմանել է մի իրականություն. «Այդ ներքին ինքնությունները քաղաքական իրավունքներ չունեն։ Քաղաքական բնագավառում պետությունը մեկ ինքնություն ունի և Թուրքիայի Հանրապետության քաղաքացիության հովանու տակ պետք է կարողանան պաշտպանել էթնիկ ինքնությունը, մշակութային իրավունքները։ Այս ամենը չի կարող հանգեցնել պետության մասնատման, դաշնային մի կառույցի վերածվելու մտքին»։

Սակայն դեպքը, որը տեղի ունեցավ բոլորովին վերջերս, ընդամենը մեկն է այն ապացույցներից, որ տարբեր էթնիկ խմբերին թույլ չի տրվում պահպանել անգամ իրենց «ներքին ինքնությունը» և մշակութային արժեքները։ Նրանց բոլոր ձգտումները բուռն հակազդեցության են հանդիպում ինչպես հասարակության, այնպես էլ պետական կառույցների կողմից։ Ս.թ. օգոստոսին Ռիզեում ծրագրված էր անցկացնել «Յեշիլչայ Յայլա» փառատոնը, որն ունի հիմնականում մշակութային ուղղվածություն և ներկայացնում է Սև ծովի արևելյան ափերին ապրող ժողովուրդների բանահյուսական, մշակութային ժառանգության դրվագներ։ Սակայն որոշ շրջանակներ, հատկապես ազգայնամոլական, աղմուկ բարձրացրին՝ հայտարարելով, թե տարբեր պատրվակներով, այդ թվում և փառատոնի, դրսի ուժերը, որոնք կապված են հայկական որոշ կենտրոնների հետ, ցանկանում են «հայկական քարոզչություն» անել։ Որպես կարևոր ապացույց նշվում էր, որ հիշյալ փառատոնի հովանավորներից է ամերիկյան *The Christensen Fund* կազմակերպությունը, որն իբր թե կապ ունի հայկական սփյուռքի տարբեր կառույցների հետ։ Էությամբ տոտալիտար, բայց ժողովրդավար ձևացող համակարգերին հատուկ միջոցներով կազմակերպվեց մի ակցիա, որի ընթացքում «հայկական քարոզչությամբ» «մտահոգ» մի խումբ քաղաքացիներ դիմեցին Համշենի գավառապետարան՝ խնդրելով չեղյալ հայտարարել հիշյալ միջոցառումը։ Գավառապետարան դիմած «մտահոգ» քաղաքացիների խնդրանքին տեղական իշխանությունները դրականորեն արձագանքեցին, և փառատոնի Համշենի մասը չեղյալ հայտարարվեց։ Համշենցիների անունից գավառապետարան դիմած Իսմայիլ Ջիհանն ասում է. «Ես ուսումնասիրել եմ փառատոնի հովանավոր ամերիկյան կազմակերպությունը, այն բավական հետաքրքիր կանոնադրություն ունի։ Որպես նպատակ է նշվում ազգագրական թանգարան բացելը, որի համար պետք է աշխատանք տանել և փաստեր հավաքել։ Այստեղի տեղանունները, ճաշերի անունները, համշենցիների օգտագործած որոշ բառերը հավաքում և գրանցում են։ Այս փառատոնը կազմակերպվում է, որպեսզի համշենցիներին ասեն, որ նրանք թուրք չեն»։

Փառատոնի հետ կապված հանդես է եկել նաև Ռիզեի նահանգապետ Քասըմ Էսենը և ասել, որ իրենք հետևում են Սև ծովի արևելքում թուրք ազգի միասնականության դեմ կատարվող ամեն քայլի։

Սակայն, չնայած այս ամենին, փառատոնն, ի վերջո, տեղի է ունեցել, բայց ոչ թե Համշենում, այլ Ֆընդըքլը քաղաքում և բավական լավ է ընթացել։ Փառատոնի կազմակերպիչներից «Գոլա» մշակույթի, արվեստի և բնապահպանության միության ներկայացուցիչ Նիլուֆեր Թաշքընը նշել է, որ փառատոնն արդեն 3 տարի կազմակերպվում է և նպատակն է աշխարհին ներկայացնել մերձսևծովյան տարածքների էկոլոգիական հարստությունները և մշակույթը, իսկ «հայկական քարոզչության» հետ կապված պնդումները հրապարակ են նետվել միտումնավոր։ Փառատոնի կազմակերպիչները, ըստ երևույթին, ծանոթ և վարժված լինելով ազգայնամոլների այսօրինակ դրսևորումներին, չեն ընկրկում և պատրաստ են շարունակել իրենց գործը։

Ամենատարածված մեղադրանք-ասեկոսեն այն էր, որ փառատոնի նպատակն է քարոզել հայկական մշակույթ և հայտարարել, թե «համշենցիները հայ են»։ Այս պնդման համար պատճառ է հանդիսացել «Հելեսա» երաժշտական խումբը, որի երգացանկի մեջ կան տարածքի տարբեր ժողովուրդների լեզուներով երգեր, այդ թվում և Համշենի բարբառով։ Ի դեպ, հուլիսին Երևան այցելած համշենական «Վովա» խմբի հետ էր նաև «Հելեսա»-ի ղեկավար և

երգչուհի, համշենցի Այշենուր Քոլիվարը: Այսինքն՝ նման «հիստերիայի» իրական պատճառներից է Համշենի ակնհայտորեն հայկական բարբառի օգտագործումը, և, փաստորեն, սա փոքրամասնությունների մայրենի լեզվի դեմ դարերով տարվող քաղաքականության դրսևորումներից է: Ավելորդ չէ մեջբերել և վերհիշել կրկին համշենցի ռեժիսոր Օզջան Ալփերի՝ Համշենի բարբառով նկարահանած «Մոմի» (Համշենի բարբառով՝ «Տատիկ») կարճամետրաժ ֆիլմից հետո ծայր առած հալածանքի դրսևորումները, որոնցից էր, օրինակ, դատական գործի հարուցումը երիտասարդ ռեժիսորի նկատմամբ: Նրա հիմնական «մեղքը» ֆիլմում Համշենի բարբառի օգտագործումն էր, որի տակ շատերն այլ ենթատեքստ էին փնտրում: Զավեշտն այն աստիճանի է հասել, որ հարցաքննել են նաև ֆիլմի գլխավոր «հերոսուհուն», տարեց կնոջը՝ մոմիին, որն ասել է, թե դա իր մայրենի լեզուն է: Ի վերջո, ֆիլմի լեզուն պարզելու համար դատարանը ֆիլմն ուղարկել է փորձաքննության: Պատասխանը եղել է այն, որ համշեներեն կոչվածն իրականում հայերենի բարբառ է:

Վերոհիշյալ փառատոնին «հայկական քարոզչություն» անելու գաղափարը տարածեց և գուցե առաջինը հրապարակ նետեց «Գորշ գայլերի» խոսափող «Յենի չաղ» թերթը՝ «Փառատոնի դիմակով հայկական քարոզչություն» վերնագրով հոդվածով: Հոդվածում ասվում էր, թե իբր հայկական սփյուռքի հետ կապ ունեցող *The Christensen* հիմնադրամը 220 հազար եվրո է հատկացրել փառատոնի կազմակերպման գործին: Թերթի փոխանցմամբ. «Վրդովված քաղաքացիները, «Համշենցիները հայ են» քարոզչությանն ի պատասխան, հայտարարել են, թե «Համշենցիները թուրքական ցեղ են»»: Հոդվածում մի քանի հասարակական կազմակերպությունների ղեկավարներ մտահոգություն են հայտնել Սև ծովի արևելյան շրջաններում տարվող «միսիոներական գործունեության» առիթով: Օրինակ՝ Փազար քաղաքի կրթության հիմնադրամի նախագահ Զևաթ Չիչեքը նշել է. «Խոսում են կորուսյալ հայկական մշակույթից և ժառանգությունից: Աշխատում են Սև ծովի արևելյան շրջաններում էթնիկ անջատողականություն հրահրել»: Իսկ Ռիզեի հասարակական կազմակերպությունների միության նախագահ Բահաթթին Քարագյոզն ասել է. «Սև ծովի արևելքում հայկական «արմատ» փնտրողները միջազգային ասպարեզում այս փաստերը և տեղեկություններն օգտագործելով՝ այն թեզն են առաջ տանելու, թե «Տեսեք Սև ծովի արևելյան մասում հայկական մշակույթ կա»:

Այս ամենը ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունների՝ թեկուզ «ներքին ինքնությունը» հարգելու մասին հայտարարություններն ընդամենը խոսքեր են, իրականում բուռն կերպով շարունակվում է էթնիկ խմբերի լեզուն, մշակույթը մոռացության տալու քաղաքականությունը: Մարդկանց իրական էթնիկ ինքնությունը մոռացության տալու գործում թուրքական իշխանությունները դիմում են տարբեր միջոցների, անգամ օգտագործում են հենց նույն ծագումով համշենցիներին: Սրանք ընդամենը էժանագին ակցիաներ են, որոնց ճշմարտացիությանը չեն հավատում անգամ իրենք՝ կազմակերպիչները: Վախի մթնոլորտում ապրող համշենցիների մեջ տեղի են ունենում տարբեր գործընթացներ՝ երբեմն նաև իրական ինքնության գիտակցական մերժում, և սա Թուրքիայի պարագայում գուցե և հասկանալի է: Ամենադիպուկ օրինակն այս ամենը բնութագրելու համար մեր համշենցի ծանոթներից մեկի արտահայտած հետևյալ միտքն է, որը և խորությամբ արտացոլում է առկա հակասականությունը. «Համշենցիների մի մասը հենց հայերենով է ժխտում իր հայկական ծագումը»:

Ռուբեն Մելքոնյան
«Նորավանք» հիմնադրամ